

ԱՆԴՐԵ Ն. ՄԱՆԴԵԼՅԱՆ

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԹԻՒՐՔԱՅԱՅԱՍԱՆՈՒՄ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՆԱԽՕՐԵԱԿԻՆ**

I

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԹԻՒՐՔԱՅԱՅԱՆՈՒՄ 20. ԲԴ ԴԱՐՈՒՄ

§ 1.- Այսօր արդէն անհերքելի վաւերագրերով հաստատւած է, որ 20-րդ դարի ընթացքում Ռուսաստանը Թիւրքիայի նկատմամբ հետեւել է զուտ սպահպանողական քաղաքականութեան: Ցարական կառավարութեան գիւտանադիտական զրութիւնների բաղմաթիւ հրատարակութիւններ՝ կատարւած խորհրդային իշխանութեան կողմից*), առանձնագիր ցայտուն կերպով ցոյց տվին ոռուսական քաղաքականութեան սպահպանողական բնոյթը Ռուսաստանի համար այնպիսի մի ծայրայեղօրէն կենսական ինդքսում, որպիսին է Նեղուցների հարցը: Եթէ 19-րդ դարի վերջին դեսպան Նելիդովը դեռ դրւառում էր Ռափորի նւաճման ծրագիրը, նրա զաղափարները գործադրութեան դրւեցին 20-րդ դարի Ռուսաստանի կողմից: Այս Ռուսաստանը Նեղուցներում սպահերազմակալ գործողութիւններ ի նկատի ունէր միայն այն պարագային, եթէ Թիւրքիայից դուրս մի ուրիշ պետութիւն փորձէր հաստատել այստեղ եւ այդպիսով խախտել տիրող դոյավիճակը: Միակ փոփոխութիւնը Նեղուցներում,

*). Օգտագործւած են հետեւեալ աղբիւրները:-

- 1) "Constantinople et les Détroits" (ռուսերեն և ֆրանսերեն).
- 2) Раздел Азиатской Турции.
- 3) Международные Отношения в Эпоху Империализма.
- 4) Матерялы, относящиеся к истории Франко-русских Отношений.
- 5) Европейские Державы и Греция в эпоху всемирной войны.
- 6) Красный Архив.

որին ձգտում էր Ռուսաստանը 20-րդ դարում, Ասփորի եւ Դարդանելի բացումն էր ռուսական եւ ծովեզերեայ ուրիշ պետութիւնների առջեւ։ Իսկ Ռափորի գրաւումը թւում էր մի հեռաւոր երազ, որ պարմանաւորւած էր Օսմանեան Կայսրութեան վլուգումով։ Ռուսաստանը տրամադիր չէր մօտեցնելու այդ երազը։ Հնդհակառակը, նա աշխատում էր որքան հնար է հեռացնել։ Այդ է պատճառը, որ նա առաջին շարքերում էր այն պետութիւնների, որոնք մակեդոնական կամ հայկական բարենորոգումներ էին պահանջում Թիւրքիայում։

Ռուս քաղաքականութեան այս փոփոխութիւնը Մերձաւոր Արեւելքում պէտք է փնտրել նախ եւ առաջ Ցարերի Կայսրութեան սեփական ուժերի տկարացման մէջ։ Ռուսաստանը 1905 թւին Հեռաւոր Արեւելքից վերադարձաւ խիստ պարտասած վիճակում եւ անմիջապէս ընկաւ յեղափոխական խառնակութիւնների զիրկը։ Այնպէս որ, 1908 թ. փետր. 3 - յուն. 21, Պետերբուրգում, կայացած գաղտնի խորհրդակցութեան միջոցին վարչապետ Ստոլլալինը յայտարարեց, թէ՝ երբ Ռուսաստանը իր ուժերը հաւաքէ, ոչ կարող կը լինի որևէ արկածախնդրութեան մէջ նետել, ոչ էլ նոյն իսկ գործօն նախաձեռնութիւն սահանձնել միջազգային բնադրաւում։ Ներկայումս խիստ պաշտպանողական քաղաքականութիւնից գուրս մի ուրիշ քաղաքականութիւն կը լինէր մոլորութիւն ռուս կառավարութեան կողմից։*)

§ 2. Այս նոյն շեշտը մենք լսում ենք եւ Սակոնովի 1913 թ. նոյեմբ. 23-ին Նիկոլայ ցարին ներկայացրած զեկուցման մէջ ի մասին ռուս քաղաքականութեան Նեղուցներում, այն պահուն, երբ եռուն բանակցութիւններ էին տեղի ունենում հայկական հարցի շուրջը։**)

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը բնորոշում է Օսմանեան Կայսրութեան վիճակը երկրորդ բալկանեան պատերազմի վերջին։ Թիւրքիայի զինուրական պարտութիւնը, անկայուն ուժիմն ու ելեւմտական խարխուլ զրութիւնը բոլոր եւրոպական կառավարութիւնների մէջ ստեղծել են այն համոզումը, թէ պէտք չէ մեծ յոյսեր գնել այդ պետութեան վերածնութեան վրա եւ թէ նրա երկարակեցութիւնը լուրջ կասկածնը է ներշնչում։ Բոլոր մեծ պետութիւնները սպասում են Օսմանեան Կայսրութեան վերջնական կազմալուծման եւ մածում են իրենց իրաւունքների ու շահերի ա-

*) Վետնի Կոմմісаріата Іностранных Дел», 1919 թ. № 1, стр. 19-25.

**) Այս շատ կարեւոր վակերագիրը իրաւունքների, «Կարմիր Դիւտան»-ի Զ. հատորում, 1924 թ. էջ 69-76:

պահովութեան մասին Փոքր Ասիայում : Թէեւ Թիւրքիոյ բնաջնջումը դուշակւած է երկու գարերի ընթացքում , բայց կարելի է մտածել , որ եթէ արտաքին պայմանները նրա համար լինեն նպաստաւոր , Թիւրքիան , իր յարաբերական ապահովութիւնը հիմնելով օտարների հակամարտութեանց եւ պայքարների վրա , կարող է դեռ երկար գոյութիւն ունենալ : Սակայն , կասկածելի է , որ նա ինքն իր մէջ անհրաժեշտ ուժը գտնէ զբսից եկող վճռական հարւածին զիմագրը բելու համար : Մանաւանդ որ անհնար կը լինի երաշխատորել ներկայ Եւրոպայի քաղաքական վիճակի կայունութիւնը , յատկապէս Բուքրէշի գաշնագրութիւնից յետոյ :

Դէպքերի այս դասաւորութիւնը , շարունակում է նախարարը , վերին աստիճանի բարդ ու գուար խնդիրներ է զնում Ռուսաստանի առաջ : Հողային նւաճումները չեն մտնում մեր անմիջական շահերի մէջ : Մեր ներքին զարգացման պահանջները ստիպում են մեր մտահոգութիւնների առաջն շարքում զնել խաղաղութեան պահպանութիւնը : Բայց եւ այնպէս , մենք չենք կարող աչք գոցել միջազգային կացութեան վտանգների վրա , որոնց վերացումը մեղանից կախած չէ : Ուրիշ պետութիւնների պէս , մենք եւս հենց այժմեանից պարտաւոր ենք մտածել մեր իրաւունքների եւ շահերի ապահովութեան մասին այն դէպքում , երբ հանգամանքները մեզ պարտադրեն զէնքով պաշտպանել մեր իրաւունքները :

Սպա՝ պլ . Սաղոնովը շատ յատկանշական ձեւով անցնում է Նեղուցների խնդրի քննութեան : Նա ընդունում է , թէ կարելի է տարբեր կարծիք ունենալ այն մասին , թէ արդեօք Ռուսաստանի շահերին համապատասխանում է Նեղուցների գրաւումը , թէ արդեօք գրաւման համար անելիք զոհողութիւնները կը հատուցեն ստացածի արժէքով : Բայց գտնուում է , որ կարելի չէ ոռւսական քաղաքականութիւնը զնել կասկածելի հիմքերի վրա : Յատկապէս , վերջին ժամանակներս , խնդիրը կնծուուել է մի կողմից Նեղուցների տնտեսական կարեւորութեան աճման փաստով Ռուսաստանի համար , միւս կողմից յաղթահարելիք քաղաքական ու ուղղագիտական դրււարութիւնների յաւելումով : Մի քան միայն ստոյդ է : Գոյութիւն ունեցող վիճակի փոփոխութեան դէպքում , Ռուսաստանը չի կարող հանդուրժել , որ խնդիրը վճռի իր շահերին հակառակ ձեւով :

Այնուհետեւ՝ պլ . Սաղոնովը բացայայտորէն զնում է այն հարցը , թէ արդեօք Թիւրքիայից եւ Ռուսաստանից գուրս ուրիշ մի պետութեան հաստատելը Նեղուցներում կը համապատասխանէ՞ Ռուսաստանի շահերին : Եւ տալիս է բացասական պատասխան :

Թիւրքիայի ներկայութիւնը Նեղուցներում , ոռւսական շահերի

տեսակէտից , վերջիններիս պաշտպանութեան խնդիրը , ընդհանուր առմամբ , լուծում է գոհացուցիչ կերպով : Թիւրքիան ոչ շատ զօրաւոր պետութիւն է , ոչ շատ տկար : Նա անզօր է սպառնալու մուսաստանին եւ պարտաւորաւած է հաշլի առնել նրան : Օսմանեան կայսրութեան արաւաւորութիւնը , այն հանգամանքը , որ նա անկարող է եղել բարեկարգւել իրաւական եւ մշակութային տեսակէտից , մինչեւ այժմ ծառայել է մեր օգտին , որովհետեւ կիսալուսնին հպատակ ժողովուրդները հակել են դէպի ուղափառ Ռուսաստանը . մի հակում , որ կազմում է մեր միջազգային կացութեան հիմքերից մէկը Արեւելքում եւ Երոպայում : Նեղուցների փոխանցումը մի աւելի զօրաւոր պետութեան հաւասար կը լինէր Հարաւային Ռուսաստանի տնտեսական զարգացումը այդ պետութեան ենթարկելուն : Իրեւ հետեւանք Դարդանէլի առեւտրական նաւերի առջև փակւելուն թիւրք-իտալական պատերազմի ընթացքին , Ռուսաստանի 1912 թ . առեւտրական հաշւեկշիռը հարիւր միլիոնով պակաս եղաւ նախընթաց երեք տարիների մէջին հաշւեկշոփ համեմատութեամբ : Եւ այդ գեռ չնայած այն հանգամանքի , որ գիւանագիտութիւնը յաջողեց Նեղուցների փակման տեսողութիւնը հասցնել համեմատաբար կարճ ժամանակի : Խոկ ի՞նչ կը լինի այն պարզային , եթէ Նեղուցները գտնւեն մի պետութեան ձեռքին , որ ի վեճակի կը լինի հակառակելու Ռուսաստանի պահանջներին : Եւ այս վտանգը գոյութիւն կունենայ նոյն իսկ այն դէպօւմ , երբ այդ պետութիւնը մեծ պետութիւն էլ չլինի : Որովհետեւ՝ չնորհիւ աշխարհագրական բացառիկ պայմանների՝ ինչ պետութիւն էլ փոխարինելու լինի Թիւրքիային , նա հետամուտ կը լինի գերակայութեան Բալկաններում եւ ծաւալելու Փոքր Ասիայում :

Առաջ է քաշւում նաեւ ամրութիւնները քանդելու ու Նեղուցները չզոքացնելու ծրագիրը : Ռուս նախարարը չի հաւատում նման կարգադրութեան արդիւնաւէտութեան . չզոքութիւնը կարելի է խախտել յանկարծական յարձակումով , մի բան , որ կը հեշտանայ ամրութիւնների բացակայութեամբ : Ամէն պարագային , Նեղուցների զինաթափումն ու չզոքացումը անհրժեշտ կը դարձնէ ոռուսական ուժերի յաւելումը Սեւ Ծովում , որպէսզի կարելի լինի նման հնարաւորութեան առջեւն առնել :

Պ . Սպառնովն այս առթիւ չի մոռանում յիշել յատկապէս Բուլգարիայի փառասիրական ձգտումները Պոլսի վերաբերմամբ . ձրգտումներ , որոնք պարզ կերպով երեւան եկան բալկանեան վերջին պատերազմի ընթացքում : Բուլգարիան ի վերջոյ պարտեց իր նախկին գաշնակիցներից , բայց նրա երազը հաստատելու Նեղուցների

ավերին կարող է նպաստաւոր հանգամանքների թելադրանքով վերակենդանանալ եւ մղել նրան մի նոր թերեւս ճակատագրական-գըրուհի իր թիւրք հարեւանի գէմ:

Յետոյ, արտաքին գործոց նախարարը մեծ դառնութեամբ մատնանշում է Ռուսաստանի տեքնիկ պատրաստութեան անբաւարարութիւնը պատմական այն մեծ ինդրի համար, որ հաւանաբար պէտք պիտի լինի լուծելու: Յիրաւիր մի կողմից բնաւ ապահովւած չէ վայրկեանի պահանջի համեմատ բաւարար ուազմական ուժերի փոխադրութիւնը գէպի Ռափոր: Հայկակի միլիոնների ծախսի, Սեւծովի առեւտրական նաւատորմիզը պատրաստ չէ այդ նպատակի համար: Դեռ 1895-ին, հայկական կոտորածների միջոցին, երբ մենք կարող էինք գրաւել Պոլիսը Անդլայի հաւանութեամբ, ստիպւած եղանք հրաժարւել այդ բանից, որովհետեւ մեր փոխադրական միջոցները պակաս էին եւ ցամաքային ուժերի զօրաշարժի պայմանները՝ անբաւարար: Նոյնպէս եւ անցեալ (1912) տարի - 18 տարի յետոյ - մենք հարկադրւած եղանք հաստատել, որ մեզ երկու ամիս պէտք պիտի լինէր երկու կորպուս զօրք փոխադրելու համար, այսինքն՝ արագ գործողութիւնն անհնար էր: Միւս կողմից, ոռու ուազմական նաւատորմիզը բաւական չափով ուժեղ չէ: Կարելի է ասել նոյն իսկ, որ 1914-1916 թւականներին թիւրք նաւատորմիզը կը լինի աւելի բարձր թէ իր նաւերի որակով եւ թէ հրետանիի զօրութեամբ: Նախարարը պնդում է գործնական միջոցների անհրաժեշտութեան վրա նման դրութեան առջևուն առնելու համար - Սեւծովի նաւատորմիզի ուժեղացում, զօրաշարժի եւ զօրքերի փոխադրութեան պայմանների բարելաւում եւ այլն:

Իսկ ինչ վերաբերում է դիւանագիտական միջոցների, նախարարը մի անգամ եւս ընդգծում է, որ Թիւրքիայի մօտակայ քայլքայումը ձեռնտու չէ Ռուսաստանի համար եւ որ վերջինս ամէն ձիգ պէտք է թափէ ուշացնելու համար քայլքայման ժամը: Այլեւ Նեղուցների խնդիրը չի կարող դրւել այլ կերպով, բայց եթէ եւրոպական ընդհանուր խառնակութիւնների շրջանակում: Վերջին պարագային Ռուսաստանը կը լինի գաշնակից մրանսային, իսկ դաշնակցութիւնը Անդլայի հետ չատ հեռու է ապահովւած լինելուց: Մենք կարող կը լինենք յուսալ Սերիայի, թերեւս եւ Ռումանիայի վրա: Բայց եւ այնպէս, կացութիւնը Բալկաններում անկայուն է չնորհիւ Աւստրեւհունգարիայի կենարունախոյս ձգտումների եւ իրրեւ հետեւանք այն բանի, որ Բուլգարիան չի կարողանում ընդունել Բուքրէ-շի խաղաղութիւնը: Մի խօսքով, պարզ է, որ խաղաղութեան պահ-

պահութիւնը, որ այնքան բաղձալի է Ռուսաստանի համար, Ռուսաստանից կախված չէ միշտ:

Նախարարը վերջացնում է խնդրելով կայսրին՝ արտօնել Հրաւորելու մի «Յատուկ Խորհրդակցութիւն» իր յարուցած խնդիրները քննելու եւ որոշելու համար ուսւարտագրին քաղաքականութեան ընթացքը եւ ներքին միջոցները այս մասին:

Պ. Սազոնովի զեկուցումը հաստատւեց Յարի կողմից նոյեմբ. 27-ին, Լիվադիայում:

§ 3. - Քայց նախ քան «Յատուկ Խորհրդակցութեան» հրաւորելու, 1913 թ. գեկտ. 31-ին (1914 թ. յուն. 13), վարչապետ կոկովցովի նախագահութեան տակ, գումարեց մի ուրիշ գաղտնի ժողով քննելու համար գերման զօրավար Լիման Ֆոն Սանդերսի նշանաւոր միջադէպը: Զօր. Ֆոն Սանդերսը զբաւած էր գերմանական մի առաքելութեան գլուխը թիւրքական բանակը վերակազմելու նպատակով եւ միաժամանակ նշանակւած էր Պոլսում կանգնած առաջին կորպուսի հրամանատար: Ռուսաստանը չէր բողոքում զօրավար Լիմանին մարզիչի գեր յանձնելու դէմ, բայց եռանդով հակառակում էր նրա հրամանատարութեան Պոլսում, որ, բնականաբար, Գերմանիային պիտի ապահովէր տիրապետող դիրք թիւրքիայում: Այս ժողովի արձանագրութիւնները^{**}) ցոյց են տալիս, որ Ռուսաստանը բոլորովին ցանկութիւն չունէր նւաճումներ անելու թիւրքիայում եւ որ նրա գիտաւորութիւնն էր ծայրացել միջոցների դիմել սոսկ տերող գոյավիճակը ապահովէլու համար:

Ժողովից առաջ, արտաքին գործոց նախարար պ. Սազոնովը Յարին ուղղած իր 23 գեկտ. զեկուցումով պնդում էր, թէ Պոլսի գերման հրամանատարութեան Ռուսաստանի կողմից ընդունելու հաւասար կը լինի մի մեծ քաղաքական պարտութեան եւ իիստ գըժքախտ հետեւանքներ կունենայ: Սակայն եւ այնպէս, պ. Սազոնովը անհնար էր համարում գործել առանց Ֆրանսայի եւ Անգլիայի հետ նախնական համաձայնութեան գալու եւ պնդում էր, թէ անջատ գործունէութիւնը ուռաների կողմից՝ կապւած է վտանգների հետ: Եւ եթէ իր գրաւոր առաջարկութիւններով եւ ժողովում բանաւոր կերպով նախատեսնում էր բանի միջոցներ թիւրքիայի դէմ, նոյն իսկ թիւրքական հողի որոշ մասերի գրաւում, դրա պատճառը այն էր, որ նա հնարաւոր էր համարում Գերմանիայի ձեռնպահութիւնը,

*) «Красный Архив», том VI, стр. 67.

**) «Константинополь и Проливы», т. I, стр. 65-71; Захер «Константинополь и Проливы», в «Красн. Архиве», т. VII, стр. 46-49; «Вестник Ком. Иностр. Дел», № 1, стр. 32. Stieve, "Iswolsky und der Weltkrieg" p. 234-246.

մանաւանդ եթէ վերջինս գործ ունենալու լինէր ամբողջ Երրեակ Համաձայնութեան հետ : Բայց եւ այնպէս, վարչապէտ Կոկովցովը բացարձակապէս հակառակեց բոնի միջոցների կիրառման, որոնք, նրա կարծիքով, անխուսափելիօքն առաջ պիտի բերէին Գերմանիայի միջամտութիւնը եւ հետեւանքը պիտի լինէր պատերազմ, մինչդեռ պատերազմը ոլ . Կոկովցովը զիտում էր իրրեւ մեծագոյն գժրախտութիւնը Ռուսաստանի համար եւ, հետեւարար, ծայրայեցօքն անցանկալի էր համարում Ռուսաստանի խառնւելը եւրոպական բախումին :

Ի վերջոյ, խորհրդակցութիւնը ընդունեց մի քանի բանաձեւեր, որոնք հրահանգում էին շարունակել բանակցութիւնները Բերլինի հետ «մինչեւ որ բոլորովին երեւայ նրանց ապարդիւն լինելը»: Եւ Թիւրքիայի դէմ ճնշիչ միջոցների կիրառումը հնարաւոր էին համարում միայն Ֆրանսայի եւ Անգլիայի հետ համախորհուրդ : Այն դէպքում, երբ այս երկու պետութիւնների մանակցութիւնը կարելի չլինի ապահովել, խորհրդակցութիւնը հնարաւոր չէր համարում գործադրութիւնը այնպիսի ճնշիչ միջոցների, որոնք կարող էին պատերազմի յանգել Գերմանիայի հետ :

Սակայն, Գերմանիան, բանական կերպով դատելով, որ իրեն համար էականը բովանդակ թիւրք բանակի վերակազմումն է իր զօրավարների միջոցով, ի վերջոյ հնարավիտութիւնն ունեցաւ զիջելու Ռուսաստանին վարկի խնդրում եւ հրաժարւեց առաջին կորպուսի հրամանատարութիւնից : Բայց այս ուշացած զիջումը գեռ յայնի չէր դեկտ . 31-ի խորհրդակցութիւնան անդամներին : Այս խորհրդակցութեան արձանագրութիւններն էլ վկայում են պատերազմից խուսափելու ակնյայտնի ցանկութիւնը :*)

§ 4.- 1914 թ. փետր . 8-ի «Յատուկ Խորհրդակցութիւնը» .**) Մի քանի շարաթ յետոյ, 1914 թ. փետր . 8-ին գումարւեց «Յատուկ Խորհրդակցութիւնը», քննելու համար արտաքին գործոց նախարարի 1913 թ. նոյեմբ . 23-ի գեկուցումը : Պ. Սագոնովի նախագահած այս

*) Լիման Ֆոն-Սամոկիսի միջադէպի մանրամասնութիւնների մասին տես իմ “La politique russe d'accès à la Méditerranée au XX siècle” dans le Recueil de l'Académie de la Haye.

**) Օգտագործւած են հետեւեալ աղբիւրները .-

1) «Красный Архив», 1924 г., т. VII, стр. 51-56.

2) «Констант. и Проливы», т. I, стр. 77-81.

3) «Сборник Секретн. документов из Архива бывшаго Министр. Ин. Дел».

4) «Междун. Отношения в эпоху Империализма», серия III, т. I, № 295, стр. 373-391.

ժողովին մասնակցեցին ծովային նախարար ծովակալ Գրիգորովիչը, բանակի սպայակոյտի պետ Պօրավար Ժիլինսկին, Պոլսի գեւապան պլ. Գիրսը և երեք նախարարութեանց մի քանի բարձր պաշտօնեաներ :

Սկզբում պ. Սազոնովը յայտարարեց, թէ մօտիկ ապագայում կարելի է սպասել այնպիսի գէպքեր, որոնք արմատավէս կը փախեն միջազգային վիճակը Մերձաւոր Արեւելքում : Ապա նախարարը մի անդամ եւս ներկայացրեց իր զեկուցման հիմնական իմաստը - անկարելի է Ռուսաստանի համար հաւանութիւն տալ, որ Ռուսորի եւ Դարդանէլի եզերքին հաստառի Թիւրքիայից դուրս մի ուրիշ պետութիւն, եւ, հետեւարար, Թիւրքիայի հեռանալու զէպքում անհրաժեշտ է, որ Ռուս պետութիւնը գրաւէ Նեղուցները : Այս առաջարկին համամիտ էին խորհրդակցութեան բոլոր անդամները :

Վիճարանութիւնը սահմանափակւեց միայն այն միջոցներով, որոնք անհրաժեշտ կը լինեն առաջարեւելիք նպատակին համեմու համար : Քանի որ արտաքին գործոց նախարարը յայտարարել էր, թէ կարելի չէ Նեղուցների գէմ նախատեսել ուստական որեւէ գործողութիւն եւրոպական պատերազմից դուրս, ամենից առաջ ներկայացաւ ուազմակիտական բարձր կարեւորութիւն ունեցող մի խնդիր : Բանակի սպայակոյտի պետ զօր. Ժիլինսկին յայտնեց այն կարծիքը, թէ իրեն էլ, ինչպէս եւ պ. Սազոնովին, անհնար է թւում, որ պայքարը Պոլսի տիրապետութեան համար տեղի ունենայ եւրոպական պատերազմից դուրս : Իսկ նման պատերազմի պարագային, Հարաւային Ռուսաստանում կանգնած եւ Պոլս ուղարկւելու յատկացւած զօրամասերը կարող են ուղարկել միայն այն զէպքում, երբ պայմանները նպաստաւոր լինեն արեւմտեան ճակատում : Հակառակ զէպքում, այս զօրամասերն էլ կուզզւեն դէպի գլխաւոր ճակատը, ուր պիտի վճռուի եւ Նեղուցների ճակատագիրը : Զօր. Ժիլինսկիի այս տեսակէտին մեծ եռանդով հակածառեց ծովային սպայակոյտի ներկայացուցիչ զլիսապետ Նեմիցը, որ արտայայտեց հետագային արդարացած այն կարծիքը, թէ Ռուսաստանը Նեղուցները եւրոպայի ձեռքից կը սպանայ միայն այն զէպքում, երբ զրաւէ կռւով եւ հաշտութեան բանակցութիւնների վայրկեանին հաստատւած լինի այնտեղ : Ուստի Պոլսի գրաւումը ուսւ զինուրական ուժերով անհրաժեշտ է նոյն իսկ արեւմտեան ճակատում պատերազմ եղած պարագային : Հակառակ զէպքում, Նեղուցները կարող են գրաւել ոչուս նաւատորմիղի կամ բանակի կողմից :

Առանց, սակայն, վերջնականապէս արտայայտւելու ուազմակիտական այս հետաքրքրական վիճաբանութեան մասին, խորհրդակ-

ցութիւնը անցաւ Պոլսի դէմ հնարաւոր պատերազմի գործնական խնդիրների քննութեան։ Բանակի եւ նաւասորմիղի ամենէն հեղինակաւոր մարմինները - կատարելապէս համախորհուրդ ոլ։ Սաղոնովի զեկուցման - վկայեցին, թէ սուսական պատրաստութիւնները բոլորովին անգոհացուցիչ են Նեղուցների նւաճման համար։ Այս խորհրդակցութիւնն էլ ընդունեց մի շաբք բանաձեւեր Նեղուցների դէմ ուղարկելիք ուժերի մեծացման անհրաժեշտութեան, զօրաշարժի ժամանակամիջոցի կրծատուման, փոխադրութեան միջոցների բարելաւման եւ նոր սազմանաւերի շինութեան մասին։ Այս բանաձեւերը 1914 թ. մարտ 23-ին վաւերացւեցաւ Նիկոլայ Բ. կայսեր կողմից։

Այսպիսով 8|21 փետր. 1914 թ. խորհրդակցութիւնից հետեւում է, որ

ա) Ռուսաստանը Նեղուցների շրջանում որեւէ գործողութիւն հնարաւոր էր համարում միայն ընդհանուր պատերազմի պարագային։

բ) Գործնական տեսակէտից Ռուսաստանը բնաւ պատրաստ էր Նեղուցների նւաճման համար։

Փարիզ.

(Շարունակիլի)

